բակոս վարդապետ 'ի պատմութեան իւրում. Եբէ. 23։ Իսկ Գրիգոր եպիսկոպոս Արծրունեաց էր յայնմ ժամանակի յԵրուսաղէմ, ականատես լեալ ամենայն անցիցն անցելոց, գրեաց թուղթ 'ի Հայս, զգուշացուցանելով զնոսա 'ի խոտորմանէ տօնից. որպէս աւանդի 'ի Ճառ ընտիրս այսպէս։

Յամի յերեսներրորդի թագաւորութեան Յուստինոսի Կայսեր, էր խաղաղութիւն յԵրուսաղէմ և յամենայն եկեղեցիս Աստուծոյ. զի եպիսկոպոսք եւ քահանայք եւ ամենայն ուխտ եկեղեցւոյ, եկք և բնակք, աղքատք եւ մեծատունք վառեալ 'ի պաշտօնն և յուղիղ հաւատս։ Իսկ բարիատեացն սատանայ մախացեալ ընդ իրսն կամէր եղծանել զլուսաւոր կարգս եկեղեցւոյ, կարգեալ 'ի սուրբ Հայրապետաց և հաստատեալ 'ի սուրբ կիւրղէ, եղեւ չար խորհուրդ հրամանի համակամ բանսարկուին բանս առնէր թագաւորին, թէ պարտ է զՏեառնընդառաջն ըստ Ծննդեան առնել, և ոչ ըստ Յայտնութեան քառասնօրեայ։ Որում հաւանեալ թագաւորին գրէ թուղթ յԵրուսաղէմ առ Յուստոս Հայրապետն և առ Երուսաղէմացիս. զի փոխեսցեն զՏեառնընդառաջն ըստ Ծննդեան՝ որ 'ի 25 Դեկտեմբերի, առնեն յայլ քաղաքս՝ ոչ ստուգութեամբ։ Իբրեւ լուաւ Հայրապետն զհրամանս Կայսեր յոյժ խռովեցաւ և ամենայն Երուսաղէմացիք ընդ նմա, և առ հասարակ ամենեքեան 'ի Ս. Եկեղեցիս ընթանային՝ բաղում հառաջանօք և արտասուօք զպաղատանս ամենատեառն մատուցանէին, և զամենասուրբ Կոյսն 'ի բարեխօսութիւն և յօգնութիւն անձանց կարդային։ Եւ ուխտ եդին մեռանել, քան անցանել ընդ օրինօք եւ զաւանդութեամբ Հարցն Սրբոց, և այսպէս վառեալ զինու Ս. Հոգւոյն կացին միախորհուրդ 'ի սէր Աստուածութեան և ընդդէմ հրամանի թագաւորին. իբրեւ լուաւ Կայսրն առաքեաց անդ զոմն դուքս տալ կատարել բռնի զտօնն. թէպէտ հասին զօրքն յԵրուսաղէմ, այլ դարձեալ ոչ անսացին հրամանի թագաւորին, այլ վառեցին ջահս և մոմեղէնս և ելին ընդ Տեառն ընդառաջն 'ի Ս. Պրոկոպս, կատարել զտօնն ըստ Յայտնութեան և ըստ սովորութեան. և զօրն արդելոյր զնոսա և նոքա սպասէին մահու քան կենաց։ Եւ մինչդեռ յայսմ